



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

**ԽՈՐՀՐԴԱ-ԱՖՂԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱՎԱԶՔ**

Յուրաքանչյուր պատերազմ քաղաքական, տնտեսական, հասարակական հետևանքներից բացի, հոգեբանական էական ներգործություն է թողնում մասնակիցների վրա: Մարտնչող զինվորները կուտակած զգացմունքները զորացրվելուց հետո դուրս են մղում քաղաքացիական կյանքում, ինչն էլ հասարակության մեջ առաջ է բերում էական փոփոխություններ:

Դեռևս հնագույն ժամանակներից պետության անվտանգության հիմնական երաշխավորը եղել և մնում է պետության զինված ուժերի համակարգը: Այս կառույցը պատմական տարբեր շրջափուլերում, տարբեր ազգերի և ժողովուրդների մոտ հանդես է եկել ինքնօրինակ կառուցվածքով և մարտավարությամբ: Սակայն մի բան հստակ է. զարգացման բոլոր մակարդակներում էլ ռազմական գործողությունների վրա մեծ ազդեցությունն է ունեցել թե՛ զորքի, և թե՛ հասարակության բարոյահոգեբանական վիճակն ու սեփական հայրենիքի նկատմամբ մատուցվող ծառայության իմացական ըմբռնումը [1]:

Սկսած անհիշելի ժամանակներից՝ ցանկացած պետություն կամ պետական կազմավորում պատերազմին նախորդած ժամանակահատվածում փորձել է հասարակության մեջ սերմանել «արդարացի պատերազմի» գաղափարը [2]: Այսինքն լեգիտիմացրել է հասարակական դաշտում պատերազմը, քանի որ հասարակությունն իր ամբողջ կազմով ոչ միայն պատերազմի բեռի կրողն է, այլև դրա արդյունքի պատասխանատուն²:

¹ Զինծառայողների անձնային առանձնահատկությունների հիմնախնդիրը միշտ էլ գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

² Պատերազմից առաջ հնարավոր վտանգները հաշվարկելու մասին էին խոսում ռազմարվեստի դասականներ Սուն Յզին, Ֆրիդրիխ Մեծը, Կարլ Ֆոն Կլաուզկիցը և այլք:

Որոշ հասարակություններում պետության նկատմամբ հասարակության ծառայության իմացական ըմբռնման հիմքում ընկած են ազգային գաղափարախոսությունը³, կրոնը⁴, էթնիկ թշնամու կերպարի ձևավորումը⁵ և այլն [3]:

1975 թ. ամերիկյան ուժերի դուրսբերումից կարճ ժամանակ անց ավարտվեց Վիետնամական պատերազմը: Ասիական տարածաշրջանն ընկավ Խորհրդային Միության ազդեցության տակ: ԽՍՀՄ ղեկավարությունը համոզված էր, որ երկրագնդի վրա առանց իրենց միջամտության որևիցե խնդիր չի կարող լուծվել:

Միաժամանակ 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունն ամբողջովին խառնեց տարածաշրջանի միջազգային դրությունը: Ցնցումներ նկատվեցին մուսուլմանական ամբողջ աշխարհում:

Աֆղանական հասարակությունն ամբողջ 20-րդ դարի դարի ընթացքում անցել էր վայրիվերումների միջով: 1973 թ. Մուհամեդ Դաուդն իրականացրեց պետական հեղաշրջում, ինչի ընթացքում հաստատված իշխանությունը երկարատև կյանք չունեցավ: Դաուդի իրականացրած բարեփոխումների մեծ մասը ձախողվեց, իսկ 1978 թ. ապրիլի 27-ին սկսված Սաուդյան հեղափոխությունն ավարտվեց Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության հռչակմամբ [4]: Նոր ձևավորված կառավարությունը փորձեց արագորեն զարգացնել աֆղանական հետամնաց հասարակությանը: Երկիրը կանգնեց քաոսի առջև՝ հանդիպելով իսլամական արմատական ուժերի ընդդիմությանը: Սկսվեց քաղաքացիական պատերազմ, որին անմասն չմնացին ժամանակի հսկաները՝ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը:

Խորհրդային մասնագետները դեռևս 1950-ական թվականներից օժանդակում էին աֆղանական տարբեր կառավարություններին՝ փորձելով սիրաշահել և Աֆղանստանը դարձնել իրենց ազդեցության գոտի: Միաժամանակ ամերիկյան հատուկ ծառայությունները 1978 թ. հետո սկսեցին համագործակցել ռազմական անկանոն ստորաբաժանումների մարտիկների՝ մոջահեդների հետ: Սկզբնական շրջանում հատկացվել է 20-30 միլիոն դոլարի օգնություն, իսկ 1987 թ. օգնությունների ծավալը հասել է տարեկան 630 միլիոն դոլարի: Նման պայմաններում տեղին է նշել, որ ԱՄՆ-ն էականորեն «նպաստեց», որ խորհրդային կառավարությունը ներքաշվի պատերազմի մեջ: 1973 թ. հետո ԱՄՆ-ն ամեն կերպ ջանում էր փոխվրեժի հասնել Վիետնամական պատերազմի համար: 1970-ական թթ. երկրորդ կեսին, բացառությամբ ատոմային արսենալից, հակամարտությունում առավելության հասնելու համար կիրառ-

³ Իսրայելի պաշտպանության բանակը (ՑԱՀԱԼ) լավագույնս մարմնավորում է վերոնշյալ հայեցակարգը: Պատահական չէ, որ Իսրայելում գործում է հրեա զինվորականի վարքուկանոնի համար մշակված հատուկ հայեցակարգ:

⁴ 20-րդ հարյուրամյակի 2-րդ կեսից նկատելի դարձավ իսլամական արմատականության գաղափարների էական աճ: Այն, վերջիվերջո, հանգեցրեց ծայրահեղ մի շարք դրսևորումների՝ ջիհադի և ահաբեկչության:

⁵ Էթնիկ թշնամու քարոզի «ուսանելի» օրինակ է Երրորդ Ռայխի քարոզչական քաղաքականությունը: Այսօր նման դրսևորումների ականատես ենք լինում Ադրբեջանում՝ հակահայ և հայատյաց քարոզչության հետ կապված:

վեցին հնարավոր բոլոր միջոցները: Ատոմային պատերազմի վտանգի դեպքում ամերիկացիների համար չափազանց շահութաբեր էր ԽՍՀՄ-ին ներքաշել Աֆղանական հակամարտության մեջ [5]:

Խորհրդային ղեկավարությունը մի քանի գործոններով էր հիմնավորումը մուտքն Աֆղանստան: Նախ նշվում էր Աֆղանստանի աշխարհագրական դիրքը: Խորհրդային իշխանությունը վախենում էր, որ աֆղանական դարպասները Մեծ Բրիտանիայի համար կարևոր հենակետ կդառնային Հեռավոր Արևելքի և Կենտրոնական Ռուսաստանի միջև առկա առևտրական և հաղորդակցության ուղիները խոցելու համար: Արևմտյան տերություններն էլ կարծում էին, որ Աֆղանստանը կամուրջ կդառնա ռուսների համար Հնդկաստան մուտք գործելու համար [6]:

Միաժամանակ ինչպես Խորհրդային Միությունը, այնպես էլ մերօրյա Ռուսաստանը, կարևորում են հարավային սահմանների անվտանգության հարցը: ԽՍՀՄ-ը հսկայական ջանքեր գործադրեց սկզբում ասիական տարածաշրջանում ամերիկյան գործունեությունը վերահսկելու, այնուհետև Միացյալ Նահանգներին տարածաշրջանից ամբողջովին դուրս հանելու համար: Հենց այդ նպատակով էլ Տաջիկստանում մինչ օրս գործում է ռուսական ռազմական բազա [7]:

Պարտականությունից առաքելություն իմացական անցումն ու առհասարակ մարտական գործողություններին մասնակցելու լեգիտիմությունը հասարակության շրջանում ամրապնդելու խնդիրը առավել բարդ է, երբ գործողությունները տեղի են ունենում սեփական երկրի տարածքից դուրս: Թեև ինքնին հասկանալի է, որ տեղական անվտանգությունն անմիջականորեն փոխկապակցված է տարածաշրջանային և միջազգային անվտանգությանը, բայց կան դեպքեր, երբ հասարակության համար այս գաղափարը կա՛մ ընդունելի չէ ի սկզբանե, կա՛մ էլ դառնում է ոչ ընդունելի գործողությունների ինչ-որ փուլից սկսած: Այս առումով բավական ուսանելի են Սառը պատերազմի եկու «տաք» դրսևորումները՝ Վիետնամական և Աֆղանական⁶ պատերազմները [8]:

Սկզբնական շրջանում երկուսն էլ, համապատասխանաբար՝ ամերիկյան և խորհրդային հասարակությունների կողմից ունեին լեգիտիմության բարձր աստիճան, բայց պատերազմի ընթացքում հասարակությունը հանգեց այն գաղափարին, որ այդ պատերազմն իրենը չէ: Դրանով էր պայմանավորված նաև գերտերությունների զորքերի դուրսբերումը վերոնշյալ տարածքներից:

Երկու պատերազմներն էլ վարվում էին գերտերությունների և երրորդ աշխարհի երկրների միջև: Երկու դեպքերում էլ մենք գործ ունեինք գաղափարական հզոր նախապատրաստության և աշխարհաքաղաքական հետաքրքրությունների բախման հետ: Երկու երկրների տարածքները վերածվել էին ռազմական գործողությունների թատերաբեմի, որտեղ ցուցադրվում և փորձարկվում էին ժամանակի նորագույն ռազ-

⁶ Վերոնշյալ երկու պատերազմների միջև բազմաթիվ համեմատականներ են անցկացվել: Պատահական չէ, որ արևմտյան գրականության էջերում Աֆղանական պատերազմն անվանվում է «Արջի թակարդ» կամ «Խորհրդային միության Վիետնամական պատերազմ»:

մական զինատեսակները⁷: Երկու դեպքերում էլ, հաղթելով մարտադաշտում և բոլոր խոշոր ռազմական գործողությունների ժամանակ, գերտերությունները պարտություն կրեցին տեղեկատվական գործընթացում⁸ [9]:

Վիետնամական պատերազմի նախօրյակին և սկզբնական փուլում ամերիկացի բազմաթիվ երիտասարդներ ոգևորված էին կոմունիզմի դեմ պայքարով և պատերազմի գերակա նպատակ էին համարում Հարավարևելյան Ասիայում կոմունիստական գաղափարախոսության տարածման կանխարգելումը: Նույն իրավիճակն էր նաև Խորհրդային Միությունում՝ կապված Աֆղանական պատերազմի հետ, որտեղ գաղափարական հիմք էր ծառայում համաշխարհային ինտերնացիոնալի մասին քարոզչությունը և խորհրդային ժողովրդի՝ որպես սոցիալիստական հասարակության ունեցած առաքելությունը համաշխարհային պրոլետարիատի հասնելու ճանապարհին [10]:

Տարիների ընթացքում պատերազմավարելով, կրելով մարդկային և նյութական կորուստներ՝ ամերիկացիներն այդպես էլ չկարողացան իրականացնել իրենց առջև դրված աշխարհաքաղաքական նպատակները և բախվեցին «դոմինոյի էֆեկտին»:⁹ Բացի այդ, հասարակության շրջանում տարածվեց այն գաղափարը, թե ամեն ինչ չէ, որ կարելի է որոշել հաստ դրամապանակի և ռազմական ուժի հաշվին: Ի պատիվ ամերիկացիների՝ պետք է նշել, որ նրանք կարողացան հաղթահարել թույլ տված սխալները և հետագա պատերազմներում⁹ հասնել փայլուն հաղթանակների [11]:

Այլ իրավիճակ էր ԽՍՀՄ-ում: Այսօր արդեն կասկածի տակ են դրվում նախկինում տրված հիմնավորումները՝ կապված ԽՍՀՄ-ի հարավային սահմանների անվտանգության, եղբայրական ժողովուրդներին օգնելու և դեպի Հնդկաստան սոցիալիզմի տարածման հետ: Առաջնային պլան է մղվում տվյալ տարածաշրջանում ամերիկացիների հատատման բացառման փաստը: Աֆղանական պատերազմի հետևանքով սպառազինությունների և ռազմաարդյութրության¹⁰ աճ արձանագրվեց՝ նպաստելով ԽՍՀՄ տնտեսության խաթարմանը և գերտերության կործանմանը [12]:

⁷ Վիետնամական պատերազմի կարևոր նորամուծություններից մեկն ուղղաթիռային ավիացիան էր: Ուղղաթիռները խոցվում էին 18 հազար թռիչք կատարելուց հետո (0"005 % կորուստ): Մի շարք պատմաբաններ Վիետնամական պատերազմն անվանում են նաև «ուղղաթիռային պատերազմ»:

⁸ Պատահական չէ, որ վիետնամական և աֆղանական պատերազմներում ընդունված է առանձնացնել տեղեկատվական բաղադրիչի խնդիրը: Տեղեկատվական գործընթացները հավասարապես դիտարկվում են օդային ռազմագործողություններին և ցամաքային պարտիզանական պայքարին զուգահեռ:

⁹ Այդ հաղթանակների լավագույն օրինակներն են 1991 թ. Ծոցի պատերազմը և 2003 թ. Իրաքյան կամպանիան: Օրինաչափ է, որ 2003 թ. ամերիկացիների օդային 38-օրյա հարվածների ընթացքում իրաքցիների կորուստները հետևյալ պատկերն ունեին. օդուժ՝ 10 %, զրահատեխնիկա՝ 18 %, հրետանի՝ 20 %, իսկ հակաքարոզչության արդյունքում անձնակազմի բարոյահոգեբանական ոգին ընկավ 40-60 %-ով: Իրաքյան զինծառայողների բարոյալքման նպատակով ամերիկացիները տարածեցին 30 մլն թռուցիկ, իսկ ապատեղեկատվության համար գործի էր դրվել 2500-ից ավելի ռադիոհաղորդիչ: Սա ևս ապացուցում է, որ մարտական հատկանիշներից առաջինը ոգին է:

¹⁰ 1970-1980-ական թթ" գիտատեխնիկական նորարարությունները հիմնականում ուղղված էին ռազմական արդյունաբերության պահանջների ապահովմանը: ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրի համակարգում իր որոյն տեղն ու դերակատարումն ուներ նաև Խորհրդային Հայաստանը:

Արդյուքում, ռուսները աշխարհաքաղաքական լուրջ խնդիրներ ունեցան ինչպես Միջին Ասիայում, այնպես էլ Կովկասի մուսուլման բնակչության հետ: Այս պարագայում որոշ ընդհանրություններ կարող ենք տեսնել Վիետնամական պատերազմի հետ: Թեև ամերիկյան հասարակությունը բավականին լավ էր տեղեկացված պատերազմի ընթացքի և գործողությունների վերաբերյալ, մինչև 1984 թ. խորհրդային քարոզչամեթոդների միայն դրական կողմերով էր ներկայացնում ռազմաճակատի իրադարձությունները: Մինչև 1987 թ. ցինկե դագաղները պահվում էին կիսագաղտնի վիճակում, իսկ շիրմաքարերին արգելվում էր գրել, որ հանգուցյալը զոհվել է Աֆղանստանում: Հասարակությունն աստիճանաբար ավելի շատ տեղեկություններ էր ստանում ռազմաճակատից, սակայն մինչև 1989 թ. գերակայում էր ինտերնացիոնալիստ-մարտիկների գաղափարը: Անգամ այդ տարիներին դեռևս փորձեր էին արվում պատերազմը ներկայացնել իբրև «արդարացի պատերազմ» [13]:

«Արդարացի պատերազմ» սկսելու համար անհրաժեշտ առաջին նախապայմանը պատերազմում ներգրավվելու պատճառի հիմնավորումն է: Ռազմական գործողություններ սկսելու համար պատճառի հիմնավորում կարող է համարվել անմեղ մարդկանց կամ խմբերի կյանքը վտանգված լինելու հանգամանքը, ինչն օրինակ միջազգային իրավունքի տեսանկյունից արցախյան պատերազմում Հայաստանի ներգրավման իրավական հիմնավորումներից էր: Ինքնապաշտպանությունը ևս համարվում է պատերազմ սկսելու իրավական պատճառ, այսինքն, եթե մեկ այլ պետություն կամ ոչ պետական զինյալ խմբավորում հարձակվում է երկրի վրա, ապա պետության կողմից պատերազմով ինքնապաշտպանության դիմելը համարվում է օրինական հիմք [14]:

Օրինական պատերազմ սկսելու համար իրավական հաջորդ սկզբունքն, այսպես կոչված, «արդար մտադրություն» է: Արդար մտադրություն ասելով հասկանում ենք նախկինում տեղի ունեցած կամ դեռևս ընթացող հանցագործության արդյունքում տուժած խմբի իրավունքների վերականգնումը կամ արդարության հաստատումը: Այս ընթացքում, սակայն, պատերազմ սկսողը պետք է բացառի նյութական և տնտեսական կարողությունների ձեռքբերումը¹¹:

Պատերազմը կարող է արդար համարվել, եթե ռազմական գործողություններ սկսելուց առաջ հիմնավորվել է, որ մնացած բոլոր միջոցները սպառվել են: Օրինական պատերազմի այս սկզբունքը ենթադրում է, որ ռազմական գործողություններ մեկնարկել ցանկացող պետությունն ապացուցել է դիվանագիտության, երկխոսության, միջնորդության, պատժամիջոցների և նմանատիպ խաղաղ այլ միջոցների ռեսուրսներ չկան, կամ դրանք կորցրել են իրենց արդյունավետությունը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից արդար պատերազմի հաջորդ սկզբունքը ռազմական գործողություններ իրականացնողի կոմպետենտության հարցն է:

¹¹ Պատմությանը հայտնի են «արդար մտադրության» մի շարք դրսևորումներ: Ամենանշանավորը, թերևս, խաչակրաց արշավանքներն էին:

Պատերազմում ներգրավվելը կարող է հիմնավորված համարվել, եթե այն իրականացնում է քաղաքական օրինական իշխանություն ունեցող պետությունը, որտեղ գործող քաղաքական համակարգը իրավական հստակ հիմքերի, օրինակ՝ սահմանադրության վրա է հենված: Այսինքն, եթե ռազմական գործողություններն իրականացնում են ամբողջատիրական վարչակարգերը, ապա դրանք չեն կարող օրինական համարվել՝ ելնելով այն տրամաբանությունից, որ եթե ամբողջատիրական համակարգերն իրենց ներսում չունեն արդարադատություն¹², ապա չեն կարող նաև որոշել հնարավոր պատերազմի արդարացիության հարցը [15]:

Օրինական պատերազմի տեսության այս սկզբունքը, թերևս, ամենաշատն է տարընթերցումների տեղի տալիս, քանի որ ներկայումս քիչ չեն սահմանադրություն և իրավական ձևական համակարգ ունեցող պետությունները, որոնք, սակայն, իրականում գործում են ամբողջատիրական սկզբունքներով, կամ, ըստ էության, բռնապետություններ են [16]:

1985-1991 թթ. ԽՍՀՄ-ի՝ աֆղանական քաղաքականության կերպափոխումներն առաջ բերեցին պետության արտաքին քաղաքական առաջնահերթությունների ծայրահեղ փոփոխությունների [17]: Նմանատիպ զիզգազները ամենևին չնպաստեցին պետության հեղինության բարձրացմանը, ավելին՝ քաղաքական ավանտյուրաները հանգեցրին աղետի՝ պետության կործանման [18]:

1988 թ. Ժնևյան համաձայնագրերի կնքումից հետո ԽՍՀՄ-ը պարտավորվեց դուրս բերել իր զորքերը Աֆղանստանի տարածքից: Դա իրականացվեց մինչև 1989 թ. փետրվարի 15-ը: Մոջահեդները ընդգրկված չէին այդ բանակցություններում և հրաժարվեցին ճանաչել ձեռք բերված համաձայնությունը: Խորհրդային զորքերի դուրսբերմամբ աֆղանական ճգնաժամը չավարտվեց: Կորցնելով Աֆղանստանը՝ ռուսները ոչ միայն պարտվեցին աշխարհաքաղաքական և ռազմավարական ասպարեզներում, այլև տուժեցին տնտեսապես և մշակութապես [19]: Խորհրդա-աֆղանական պատերազմը դարձավ ԽՍՀՄ կործանող կատալիզատորներից մեկը:

Ինչ վերաբերում է Աֆղանստանին, ապա պետք է նշել, որ երկիրը մինչ օրս թաղված է քաղաքացիական պատերազմի մեջ և դեռևս վաղ է խոսել երկրում խաղաղության հաստատման մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Ավանեսյան Հ., Հարությունյան Ն., Հովհաննիսյան Ս., Ստեփանյան Լ., Ասրիյան Է., Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման մեթոդներ, Գործնական հոգեբանություն, Երևան, 2017, էջ 5-24:

¹² Ընդհանուր առմամբ պատերազմի արդարացիության հարցը հուզել է բոլոր երկրների և ժամանակների մտածողներին՝ Արիստոտելից մինչև Հուգո Գրոտիուս, Խաչատուր Էրզրումցուց մինչև Մարտին վան Քրևելը:

- [2] **Сун Цзи**, Искусство войны, Глава 1. Базовые положения., под. ред. Т. Клири, М., 2013, сс. 59-76; **Фридрих Великий**, Его величества короля Прусского наставление о военном искусстве к своим генералам. Анти-Макиавелли, Москва, 2014; **Клаузевиц Карл фон**, О войне, Москва, 2007.
- [3] **Վերանյան Վ.**, Իսրայելի քաղաքականության վերաբերյալ, Երևան, 2016, էջ 52-9, **Գրիգորյան Ս.**, Իսլամական պետություն. ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Երևան, 2016, էջ 32-6, **Քոթանջյան Հ.**, Սրբազան պատերազմի ազգաքաղաքականությունը Աֆղանստանի օրինակով, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ Վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Երևան, 2009, էջ 228-41, *The History of Terrorism, From Antiquity to Al Qaeda*, ed. by **G. Chailand and A. Blin**, University of California, 2007, pp. 319-49, **Karthik Narayanaswami**, *Analysis of Nazi Propaganda, A Behavioral Study*, Harvard University, URL: <https://blogs.harvard.edu/karthik/files/2011/04/HIST-1572-Analysis-of-Nazi-Propaganda-KNarayanaswami.pdf> (Accessed: 24.09.2019), **Адибебян А., Элибегова А.**, Армянофобия в Азербайджане, Ереван, 2013.
- [4] **Сармачар П.**, М. Дауд Хан: Попытка радикальной модернизации экономики Афганистана и ее последствия, *Международный научно-исследовательский журнал*, Екатеринбург, № 11 (42), 2015, Часть 5, сс. 81-2.
- [5] **Bergen P.**, *Holy War*, Inc., Free Press, 2001, p. 68, **Шило Н. И.**, Афганистан 30 лет спустя. Последствия ввода советских войск в ДРА для страны и региона, *Вестник МГИМО*, 2010, с. 6.
- [6] **Иванов В.**, Афганская война 28.06.2018, URL: <https://histrf.ru/biblioteka/b/afghanskaia-voina> (дата обращения: 15.09.2019).
- [7] **Ищенко Р.**, Неутихающий хаос: почему Афганистан всегда объят войной, URL: <https://sptnkne.ws/nfk9> (дата обращения: 06.02.2019).
- [8] **Лупашко М.**, Вьетнам-Афганистан... Две войны-два исторических урока, URL: <https://ava.md/2014/01/09/v-etnam-afganistan-dve-voyny-dva-istoricheskikh/> (дата обращения: 25.09.2019), **Yousaf M., Adkin M.**: *Afghanistan — The Bear Trap: The Defeat of a Superpower*. Casemate, 2001, p. 159, **Cohen R.**, *The Soviet' s Vietnam*, *Washington Post*, April 22, 1988.
- [9] **Հովհաննիսյան Ա.**, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. Հեռանկարները, Երևան, 2017, էջ 202-3: Вьетнам. Боевое применение вертолетов в 2 частях, отв. ред. **Сергеев П. Н.**, «Торнадо», Кировское общество любителей военной техники и моделизма, 1997-2000; **Keeton P., Scheckner P.**, *American War Cinema and Media Since Vietnam; Politics, Ideology and Class*, New York, 2013, p. 25.
- [10] **Ляховский А., Давитая С.**, *Игра в Афганистан*, Москва, 2009, сс. 334-65.
- [11] **Հովհաննիսյան Ա.**, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. Հեռանկարները, Երևան, 2017, էջ 494-508:

- [12] **Гайдар Е. Т.**, Гибель империи : уроки для современной России, Москва, 2006.
- Խաչատրյան Վ.**, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում, Երևան, 2015, էջ 253-85:
- [13] **Рабуш Т.**, “Пропагандистская война” США и СССР вокруг вопроса о боевых действиях в Афганистане (1979–1989 гг.), Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, 2017, № 3, сс. 58–65.
- [14] **Չախեր Հ.**, Միջազգային մարդասիրական իրավունք, Ներածություն, Երևան, 1999, էջ 31-62:
- [15] Martin Van Creveld, The Transformation of War: The Most Radical Reinterpretation of Armed Conflict Since Clausewitz, N. Y., Free press, 1991, pp. 101-35.
- [16] **Clark W.**, Waging Modern War: Bosnia, Kosovo, and the Future of Combat. N. Y.: Public Affairs, 2001, p. 25.
- [17] **Топорков В. М.**, Эволюция взглядов советского руководства на афганскую политику СССР (1979–1991 гг.), Власть, 2014, № 6, с. 168.
- [18] **Люттвак Э.**, Стратегия: Логика войны и мира, Москва, 2018, с. 330.
- [19] **Иванов А.**, Вывод Советских войск из Афганистана был ошибкой, Аргументы недели, 11.02.2009, URL: <https://argumenti.ru/politics/n171/39722> (дата обращения: 13.09.2019).

Մուրադյան Գուրգեն

ԽՈՐՀՐԴԱ-ԱՖԴԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՅԱՎԱԶՔ Բանալի բառեր՝ ԽՍՀՄ, արդարացի պատերազմ, մոջահեդներ, Աֆղանական սինդրոմ, անկանոն պատերազմներ:

Հոդվածի հեղինակը քննության է առնում հակամարտող կողմերի՝ Խորհրդա-աֆղանական պատերազմի մեկնարկի առթիվ առաջ քաշած հիմնավորումները: Քննվում են ԽՍՀՄ-ի պաշտոնական տեսակետները՝ ընդգծելով հարավային սահմանների անվտանգության պահպանման կարևորությունը: Հեղինակը առաջնահերթություն է տալիս աշխարհաքաղաքական գործոնին:

Առանձնահատուկ ներկայացվում է նաև պատերազմում ԱՄՆ-ի ունեցած դերակատարությունը: Նշվում են բոլոր այն պատճառները և մեխանիզմները, որոնց շնորհիվ ԱՄՆ-ն ԽՍՀՄ-ին ներքաշեց վերոնշյալ հյուծող պատերազմի մեջ: Աֆղանական պատերազմում ԽՍՀՄ-ի մասնակացությունն ամբողջովին կործանեց երկրի տնտեսությունը և հեղինակագրկեց Խորհրդային Միությանը միջազգային ասպարեզում՝ հանգեցնելով վերջինիս կործանմանը:

Мурадян Гурген

СОВЕТСКО-АФГАНСКАЯ ВОЙНА: СТРАТЕГИЧЕСКАЯ НЕОБХОДИМОСТЬ ИЛИ ГЕОПОЛИТИЧЕСКАЯ КОНКУРЕНЦИЯ?

Ключевые слова: СССР, справедливая война, моджахеды, афганский синдром, нерегулярные войны.

Автор статьи рассматривает аргументы, выдвинутые конфликтующими сторонами в связи с началом советско-афганской войны. Обсуждаются официальные взгляды СССР, подчеркивающие важность поддержания безопасности южных границ. Автор ставит на первое место геополитический фактор.

Должным образом рассматривается роль, которую сыграли США в войне, упоминаются все причины и механизмы, с помощью которых США втянули Советский Союз в войну. Участие СССР в афганской войне полностью разрушило экономику страны и дискредитировало Советский Союз на международной арене, что привело к его распаду.

Muradyan Gurgen

SOVIET-AFGHAN WAR: STRATEGIC NEGOTIATION OR GEOPOLITICAL COMPETITION?

Keywords: USSR, fair war, mojahedin, Afghan syndrome, irregular warfare.

The author of the article considers the arguments put forward by the conflicting parties in connection with the beginning of the Soviet-Afghan war. The official views of the USSR are discussed, emphasizing the importance of maintaining the security of the southern borders. The author puts the geopolitical factor first. The author gives priority to the geopolitical factor.

The role played by the United States in the war is duly considered, as well as all the reasons and mechanisms by which the United States dragged the Soviet Union into the war. The participation of the USSR in the Afghan war completely destroyed the economy of the country and discredited the Soviet Union in the international arena, which led to its collapse.